

ցանութեամբ, և գոինեալ  
զթոյնն զահօրէն և զչար  
կը պատիւ:

Քայ Յիսուս ի կողման  
Գալիկես ի Յորդանս  
ի Յոհաննէն..... ուր աս-  
տուածանաւ մար թո վի  
մկրտեամ՝ այսօր ի Յոր-  
դաննէն կերպագեալ իմսու  
իմ զնախաչօրն երաք ը-  
յադաս իմ զնախաչօրն  
երաք զմեզու:

Լցեալ ծաւալեցան ամե-  
նայն արարածը իմաստի  
փառաց նորա, Հայր ի վե-  
րասակ վկայէր վերասակ  
ձնադեան զա է որդի իմ  
որինել:

Քանի որ ի արարուն  
ընակեամ էր կաւորի ի  
լեան ձերմոն ի մարդի  
գուռա Յորդանսուն,  
աստուածանաւ մարաթոն  
զոր ի մշիշ տանը թա-  
կաց ի շորէն:

Այս զիխով կը փակեմ շարականներու  
յօդուածներու շարքը: Բայց համառօտիւ  
կ'ուզեմ ըսել հոս որ Զաքարիա կաթո-  
ղիկոսին Վարդապատի և վերափոխման  
ճառերէն բրիսած են նաև այդ տօններուն ա-  
ւուր պատշաճի շարականները: Միայն երբ  
առանձին զրբյուղով երկնան մեր մոոցուած  
Հայրապետին երկերը, այն ժամանակ ա-  
ւելի յայտնի պատի երենայ, անոր ունե-  
ցած ազգեցութիւնը մեր եկեղեցական եր-  
գերուն մէջ:

Հոգւոյն Արրոյ գալստեան ութօրէից շա-  
րականներու ազրիւրը նշմարեցի ձարձն-  
տիրներուն ընծագած լիննեան ճառերուն  
շարքին մէջ, նմանութիւնը սակայն ար-  
ձագանգի մը համիմատութիւնը կ'առնեւ,  
ինչ որ Շնորհալոյ յատկացուած երգե-  
րուն յատուկ է, երբէց բառացի նմանու-  
թիւններ, օժտուած բանաստեղծական զգա-  
յուն հոգւով մը, Հոովմկայի սոխակը՝ իր  
ընթերցութերուն թթվառութերը միայն կ'ա-  
ւանդէ մեզի:

Հ. Լ. Աթձենեն

վերջ

## ԱՏԱՆԱՅԻ ԳԱԻԱՌԸ

### ՀԻՆՆ ԿԻԼԻԿԻԱ

Նախորդ թիւն (էջ 141-142) ժանուար էինք  
Տոբի. Ճեմութեալ փառաց Ա. ի համարքական ճառա-  
խութենա Հոովմկ Փուլէէնի Ռամանոյի Հանգիցից  
սրացին մէջ. Ծիայ նոյն բանախութենը ամբողջա-  
կան թարգանաւութեամբ կը ներկայացնենք մեր ընթեր-  
ցողաւ:


Անոնք որ կը ճամբրութեամբ Փոքր Ասիոյ  
Հարաւային կողերուն երկայնութեամբ, բո-  
լոր Ժայռուտ լեռներ ու ծովափին վրայ  
միրճուած զահաւանդներ, ուր չկայ կանաչ  
անտառ մը որ Հակաղըրութեամբ աւելի կա-  
պոյտ ցուցնէ երկինքը, ոչ մէկ փոքրեկ  
քաղաք կամ գիւղ մը որ ծովուն ջուրերուն  
մէջ ցուանայ, անհաւատալի կը գտնեն  
այս տեղեկութիւնները, թէ այդ լեռնե-  
րուն մէջ, ձորերու խորեն, գներուն եր-  
կայնութեամբ, որ կէս մը թաղուած հա-  
ցիւ կրնան ծովը նետուիլ, երկիրներ և  
գիւղը ըլլան որ ժամանակ մը շատ թազ-  
մամարդ և արտաքոյ կարգի բարերօր էին  
բնութեան արտասովոր հարստութեանց  
պատճառաւ:

Այս ազգեցութիւնն ունեցայ ես, մրտ-  
րով շրջելով ձենովացոց և վճենելիցեց-  
ոց փառապանծ շրեղութեանց մէջ, որ  
այս երկիրներուն հետ անընդհատ առու-  
տուր մ'ունեցան, որ այս կողերուն վրայ  
երկիրներ զրաւեցին, հաստատութիւններ  
հիմնեցին, գաղթականութիւններ հաստա-  
տեցին, հոն վաճառեցին իրենց բերքերը,  
մեծ և համբաւաւոր ըլլին խտալիոյ ա-  
նունը:

Այս շրեղութիւնները ինծի զրոյց կը  
թուէին, և դէպ ի այս նաւահանգիստնե-  
րը, որ այսօր մեծ մասամբ աւազով թա-  
ղուած կամ աներկութեացած են, ուղղուած  
ցոկանաւերու տեսութիւնը, ցնորք մը,  
զուտ երկակայութիւն մը:

Երբ տեսայ սակայն ամրոցներու, դը-  
ղեականներու, հոյակապ շէնքերու, թատրոն-

ներու, այս հին ժողովրդոց բաղարներուն, խտալացւոցմէ՝ իրենց զաղթարարական, կան ուժին լաւագոյն դարուն մէջ հիմուած գործունէութեամբ ոգևորուած, զործերուն աւերակները, այդ ազդեցութիւն աւազանի մը մէջ, բերրի հողերու միջև և, այդ տեղերուն համար ոչ սովորական, հանցային գործունէութեամբ ոգևորուած, փոքրիկ բաղարը Մարգրի. երբ ցամաք



Համապատասխան գույք

ՆԵՐԻ թէ անհաւատալի և չափազանցուած պատմութիւններ եղած ըլլան, նուազեցաւ և բոլորպին ջնջուեցաւ, երբ երևացաւ ինձ ժպտուն ու գեղեցիկ, ծովային հրաշալի

ելայ Աստալիա, որուն նաւահանգիստը վենետիկեան գործ է, և որու հողերը պարարտացած են ջաւրոս լեռներէն իջնող ջրի հոսանքներէն, և մասնաւորապէս երբ,

Մերսին հասնելով, վաճառականութեամբ և ճարտարարուեասով ծաղկած, կանաչ ըլուրներով և սպիտակ հատիկներով մի, բամբակի ամենազեղցիկ դաշտերով զըւարթացած բաղրի մը մէջ գտայ զիս:

Մակայն այս առաջին բացցը ազդեցութեան, ուրիշ մըն ալ յաջորդեց ցաւալի, այլ ևս անմշակ տեսնելը այս ամենապարարտ հողերը ինչպէս էին ժամանակ մը, ամէն կողմն կոփկուուած կամ անխնամթողուած հողերու, անտառի և հանքերու ահազին հարստութեանց հանդիպումը, հազիւ նշմարուած ճամբորդէն, որուն կ'երկին, թուփ թէ, հրապուրելու համար զինքը դեռ աւելի մեծ ծածկեալ զանձեր գտնելու, Ռւ ցաւի զգացումը՝ կ' աւելնայ տեսնելով իտալական ազդեցութիւնը ու չինչ բանի մը վերածուած, և ստուգելով որ մեր երկիրը, հոն՝ շատ պատուաւոր և գնահատուած որդիներ ունենալով հանդերձ, ուրիշ ազգերու չափ կարեռութիւն մը՝ չունի: Այս անդրազարձրութիւնը ոգի տուաւ ինձի՝ այդ անխուսափելի եղող ըուր դժուարութեանց զէմը ճակատելու, այցելելու համար երկրին մէջ բնակող իտալացի զալթականներուն, որ նախապէս երբեք չէին փնտուուած այդ Աստանայի գաւառին մէջ, որ սահմանը կը գծէ Ասորիքի և Փոքր Ասիոյ մէջտեղ, ու Հինն Կիլիկիոյ կը համապատասխանէ:

Այս Գաւառին մէջ, իտալիաներկայացուած է միայն Մերսինի պատուակալ հիպատոսական գործակատարէ մը, և, միայն երկու տարիէ ի վեր այս կողմերս, Պտանայի մէջ ճասատառած պաշտօնական դեր հիպատոսուէ մը. մեր բաշ ական փորդներու բազմութիւն մը՝ կ'աշխատէր Կիլիկիոյ և Ասորիքի միջն Ամանոսի փառուղոյն (թիւնէլի) շինութեան մէջ, Պաղտառափ շողեկառեցին համար, որ ճակառակ պատերազմին ծագելուն և Թուրք զինակոչութիւն ծանր անպատճենութիւններուն, այդ օրերը եռանդով սկսուած էր:

Գաւառին, մասնաւորապէս Աստանայի կուսակալութեան մէկ ծայրէն միար կորելով, — իտալիոյ մէջ շատ բիչ ճանչցուած

երկիր մը, — կրցայ որոշ զաղափար մը կազմել այդ երկրին կարգէ դուրս բնական հարստութիւններուն վրայ: Շւատի պարտը մ'ունիմ Աշխարհազրական Արքունիք Ընկերութեան իմ բոլոր երախտագիտութիւնն յայնելու, որ, յետ նպաստելու և օգնելու իմ ճամբորդութեան, երկրորդ անգամ մ'ալ շնորհելով ինձ այս զանցիքին մէջ խօսելու բարձր պատիւը, կ'ընծայէ նաև առիթը՝ ցուցադրելու համար ինչ որ կրցայ տեսնել այս կիլիկիոյ երկրին մէջ, հարուստներուն մէջ ամենահարուստը, և բանալի այդ զանձերու արկղին՝ որ է կեզդուական Ասիան, և խօսելու հոն բնակող իտալացւց, շոգեկառեցրու աշխատութեանց զրադած մեր գործաւորներուն վրայ, որ իրենց աշխատութեամբ կը վեցնեն այն քարերը որ մինչև ցարդ անյազելի պատուար մ'եղան նիւթական և քաղաքական զարգացումին և կը գործակցին այդ երկրներուն փրկութեան: Անոնք ալ մեր եղբայրներն են, և, մասնաւորապէս այս տիսուր և մեծ զարանաւմի օրերուն մէջ, կը կարօտին որ հայրենիքը յիշէ զիբենք, որ յանիրաւի կամ իրաւամբ կը խիթան որ առ նուազն մոցցուած են:

\*  
\*\*

Ասորիքի և Աստանայի գաւառին Քառզութիւնը կը պատկանէր իտալացի վեցարաւորներուն: Միայն 1908ին եղաւ, Քաղղիոյ մէջ կրօնաւորական կարգերու շնչուած ժամանակ, որ Վեցարաւորներու ընդհան արքան իտալացի Վեցարաւորները փոխանակեց զաղղիացիներով: Նախ՝ Մերսին մէջ, իշխանութիւն ունենալով նաև Տարսոսի, Ա. Պաղոսի փառապանծ հայրենիքին վրայ, որուն վրայ պիտի վերադառնանք: Քառզութեան զինաւորն էր Հայրն Բարսեղ, առացեալի և հայրենասիրի ճշմարիտ տիպար մը, որուն յիշատակը հոն օրհնուած է, և որուն անունը յարգանքով կը կըկնուի ըլլայ Յրիստոնեաներէն ըլլայ թուրքերէն: Ան իտալականութեան առաքեալ մ'եղաւ Մերսինի

մէջ, ուր մանչերու և աղջիկներու դպրոցներ հիմնեց և կառոյց լլ. Անտոնայ գեղեցիկ եկեղեցին: իր հաստատութիւնները, բոլոր ի մի խմբուած ընդարձակ կզզի մը ձևացնելով, բաղբին ամենէն աւելի կեղրոն տեղւոյն վրայ, նաահանգստին և շոգեկառքի կայարանին մօտերը, զեռ իտալացւոց կը վերաբերին, բայց գժրազդարար իտալական լեզուն զրեթէ մոռցուած է. դպրոցներու մէջ այլ ևս չեն սորվեցներ զայն, և ոչ իսկ իրք օժանդակ լեզու մը. ու մինչև իսկ մայրապետներն, Հայրերուն փոխանակութենէն վերջ, իտալացիութենէ գաղղիացի դարձան:

\* \*

Այս ընդարձակ գաւառը, որ ինչպէս յիշուեցաւ, Հինն կիլիկիոյ կը համապատասխանէ, աշխարհազրական տեսակէտով երկու մեծ գաւառներու կը բաժնուի. արեմըտեանը՝ վայրենի լեռնաշղթայով մը կը արուած է, որու զագաթն է իմպարոս լեռը և որ կը շարունակուի մինչև Ատալիա ամենաընդարձակ անտառներով ծածկուած, ուսկից առած է իր անտունը՝ հիներէն թրակիա կամ Ասրար կոչուելով, որուն մայրաբաղաքն էր Անելքի, հինն Անելքիա. իսկ արևելեանը կամ զաշտայինը՝ կոչուած նաև Փետիա (տափարակ) Ալիյօն ու ունիոն, շատ մը բարերեր դաշտերէ ձևացած է: Մայրաբաղաքն է Ատանա, նաւահանգիստը Մերսին, կարեոր կերուններն Տարսոն, Օսմանիէ, Ֆէշնէ, Ճինան, Արս, և այլն:

Ամրողջական մակերեսոյթը արժեցուցած են 41,000 հարմ. քռ. Էմիլիայի կրկինը, գրեթէ 45 միլիոն ֆէօնիմի<sup>1</sup> համարժէք: Համելով այս մակերեսոյթէն լեռներէն, անտառներէն և գտերէն բռնուած միջոցը, 27 միլիոն տէօնիմի մշակուած երկիր կը մնայ, համարժէք 2,460,000,

կալի (ettari), ամրողջական մակերեսոյթին գրեթէ երկու երրորդը:


Հնուց ի վեր նշանաւոր՝ երեք մեծ գետեր կը կտրէն այս գաւառը: Արևմտեան մասին մէջ կէօք-սուն որ արևմուտքէն արևելք կ'ընթանայ, Արևելեան րաժնին մէջ Մարոս հիմայ Միհուն կոչուած, Պիրամուն՝ որ հիմայ Ճինան կ'ըսուի, բազմաթիւ ճիւղերով և ուրիշ փոքրիկ գետակներով, որ կը վազեն Հիւսիս-Ալեսելքէն հարաւ-արևմուտքը, Այս զետերը կը պարարտացնեն ու կ'ոռոգեն ձորերն ու դաշտերը, և ցանի մը հատը ինչպէս է Կիւտանոսը որուն եզերը կը կանգնէր Տարսոն, Տաւրոս լեռներէն, կամ աւելի ճիշտ Պուլզար տաղէն իշնելով ամենազեղեցիկ ջրվէժներ կը ձևացնեն. և ամէնքն ալ կրնան գործածուիլ ոռոգելու և շարժիչ զօրութիւն արտազրելու համար:

Բոլոր այս գետերէն կտրուած ստորին ընդարձակ դաշտավայրը, որուն տէլզան միշտ աւելի առաջ կու գայ, Թուրքիէն Չուրուր-օվա կոչուած է և բարերերութեան ու առատութեան այնպիսի մեծ համբաւ մ'ունի, որ զերանուանութեամբ «դաշտավայրերու թագուհի» կրնայ կոչուիլ և իր առակ դարձած հարստութեամբն, իրեն վըրայ հրապուրած է ամէն դարերու ծովահնչներու արշաւանքը և Միջերկրականի, Եգեան ծովու և Աղբիականի բոլոր նաւահանգիստներուն վաճառականական նաւերը: Այս պատճառու է որ նախ Փիւնիկեցից, յետոյ Յոյները, Հոռվամայեցիները, Վիհետկեցից, Ճենովացիք, Կետարերը, Մարակինոսը, Եղիպտացիք՝ Խսկենսերունի, և աւելի առաջ՝ հիմայ աազի տակ թաղուած Այասի՝ հինն իսսոսի նաւահանգիստը, աշխարհիս առաջին ցորենոյ շտեմարանն ըրած էին:

Ժամանակաւ ամենածաղկեալ բաղարներու յուշտածաններն ու աւերակները կը ցուցնեն զայն: Հարկաւոր չէ սակայն հնախոսական ուսումնասիրութիւն մը՝ ստուգելու համար այս գաւառին հին ճոխութիւնն և արտաքուած արտաքի բերի ըլլան. և ոչ կ'արժէ դարերով ետ երթալ զիտելու

1. Տէօնիմը ազարակյին մակերեսոյթի չափ մ'է, շատ սովորեան Տաճկաստանի մէջ է կը համապատասխան գրեթէ՝ 900 մեր բառակուաս:

ժողովուրդներու կոփաներն այս երկիրս կիւրոսի, Դարեհի և Աղեքանդրի պատ-  
սոաններու համար, որ միշտ հզօր միա- մովթիւններն, հասնելու համար հռովմէա-  
պետներէ փափաքուած ըլլալուն պատճա- կան տիրապետութեան, Հայոց իշխանու-



Առաջին

ուա չէ կրցած անկախ տէրութիւն մը ձե- թեան, Խաչակրաներու Տէրութեան, Ե-  
ւացնել և ոչ ալ՝ իր չափազանց տարրեր գիտացիներու վայրկենական գրաւման,  
ցեղերով իսառն ժողովրդեամբ՝ մէկ ազգ որ 1839ին ասիպուեցան թողուլ զայն  
մը կազմել, անօգուտ է դարձեալ կրկնել Ճաճկին, որուն տէրն եր արդէն դարերէ

ի վեր : Կը բաւէ կտրել անցնիլ անոր զաշտավայրերը, Տարսոնինէն սկսեալ, որ կիւղնոսով կտրուած է, մինչև Ռուբեյի զաշտը՝ զոր Սէյհուն կը կտրէ. մինչև Անազարդայինը և ձիհանինը, ձիհանէն և իր ճիւղերէն կտրուած։ Մարզ ապշած ու ընդարձացած կը մայ դժաելով այս անծայր զաշտերուն անսահման տարածութիւնը, որուն մէջ շատ քիչ ըլուրներ ու հազիւ քանի մը փոքրիկ լեռներ կը տեսնուին անսահմանութեան մէջ կորսուած։ Իրեւ անեզր ծով մը կը թուլին անոնք, և այնչափ է հարթ բնդրածակութիւնը, որ շարունակ կը կրկնէ կարծեն ապշած ճամբրողին առջն կրկներելոյթ (Ֆաթա-Մորկանայի) զարմանալի երևոյթը։ Եւ երկրաբանական տեսակետով ծովային յատակ մ'էր արդէն միշնակ զարուն դանդաղ երկրաշարժներու զարնուածքներով տեղ տեղ բարձրացած, և Տաւրոս լեռներէն իջնող գետերուն ջրատային առաս գիրտերով ծածկուած, որոնց կրային կազմութիւն մ'ունին, և ժայռերը դեռ վեր կը բարձրանան՝ այդ քանի մը ըլուրներու և փորիկ լեռներու խորերէն որ կը տեսնուին հոս ու հոն (Անաւարզ, Միսիս, Մարաշ)։

Կիլիկիան դաշտավայրը, Սելևկիային մինչև Սիս, 200 հզմ. երկայնութեամբ, և 4500<sup>2</sup> հզմ. մակերեսոյթով, որուն շուրջ 3000ը մշակելի են, 25–80 մեդր բարձրութիւն մ'ունի ծովու երեսէն։

\* \* \*

Բամպակի դաշտեր, օրորենի դաշտեր, և գետաւելի, գիրազիաբար, անմշակ մեացածներ՝ գործունէութեան, գիտութեան, բազուկներու և դրամագլուխներու պակասութեան պատճառաւ, և բաց ասաի, ու ամենէն աւելի, հասարակաց իրերը մատակարաբերու կերպին և աշխատող դասկարգերուն բոլորովին առանց կրթութեան մացած ըլլալնուն պատճառաւ, ահա ինչ որ կը ներկայանայ մեր աչքին առջն։

Այս հոդերուն պարարտութիւնը ցուցնելու համար կ'ապահովցնեն զծեզ որ կը բաւէ երկրին երեսը միայն քերել և ահա բոյսը ուոճազարդ կ'անի. և թէ ի՞նչ հունտալ որ ձգովի հոն, ի՞նչ մշակութիւն ալ փորձուի, միշտ ամենառատ արտադրութիւն մը կը ստացուի։ Թէ ճիշտ է անոնց այս հաստատութիւնը, ինձի ցուցուած էր այնու որ մէկ ցորենը 15–20 կու տայ՝ աղը չզրուած և լրջօրէն չաշխատուած երկրի մէջ և ոչ ալ ընտրուած հունտերով. ու բամպակին, տեսակով և առատութեամբ չափաւորէն աւելի վեր, որ աճած կը տեսնէի առանց սերմընտրութեան և պարարտացման, առանց լաւ մը կրկին մաքրելու գէշ խոտերէն և մասնաւորապէս առանց ոռոգուած ըլլալու՝ ցմիշտ չոր ամառով մը։

Ցորենը կը փոխանակէ բամպակին, ու մեզի համար շատ տարօրինակ է տեսնելը, որ հազիւ բամպակը հաւաքած, կ'անցնի ցորենի սերմացանը և առանց երկելու՝ կը նետէ հունտը բամպակի ցողուններով դեռ բոլորովին անհարթ հողին վրայ։ Այս հետաքրքրական կերպով ցանելին և հունտը ծածկելու չափ երկիրը թեթե մը ցարանելին վերջ, դաշտը բոլորովին կը մոռնան մինչև մայիս, յորում կը դառնան հունձքի համար։


Ուրիշ կարեոր բերք մը, որ իտալիա ալ կ'ուղարկուի, շուշման է, որ, աշխատութեան խնայելու համար, — բայց յայտնի թէ մշակութեան վնասով, — բամպակին հետ կը ցանուի և անկէ ամիս մ'առաջ կը հաւաքուի։

Եթէ երկիրը այսչափ առատօքէն կ'արտադրէ հիմայ, անհոգութեան այսպիսի պայմաններու մէջ, մտածեցէք թէ ո՛րչափ պիտի արտադրէ, եթէ իմաստուն և գործոն ձեռք մը վարէ անոր մշակութիւնը։

\* \* \*

Բոլոր Վիլայէթին մէջ կը վիստան նաև հանքերը, մանաւանդ երկաթի, քրոմի և պղնձի։ Աշխատութեան մէջ են օր, հմր.

արեւմոեան կողմն՝ Անամուրի հրուանդանին բացաբժակ ստացուածք են շոգեկառ-  
շուրջ զտնուածները, և անոր արտօնութիւնն ըի ընկերութեան։ Այս պայմանը դրուած  
առած են տեղական զանազան ընկերու- է բոլոր շոգեկառը երու արտօնութեանց  
թիւններ, բայց մասնաւորապէս Գաղղիա- մէջ։



Ժի՞նաթ գիտ և կասմով Մսիսի

ցի՞ներն ու Անզդիացի՞ները, Պազտատի եր-  
կաթուղիին երկու կողմերը՝ 15 հզմ. հե-  
ռուն զտնուող հանցերն աւ, շոգեկառը ի  
առանձնաշնորհումին յայտնի պայմանով,

\*\*

Այս զաւառին լեռնային մասը, դէպ ի  
ներսերը, կազմուած է մի միակ, ամենա-

բնարձակ, փառաւոր անտառէ մը շոճիներու և եղեններու, կաղնիներու և ցարասիներու, նոճիներու, եղջերենիներու, Անտարակոյս 400,000 ի կը հասնին այս բուսական մեծի վերարկուին տակ ծածկուած կալերն, որոնց 150,000ը Ատանայի կուսակալութեան մէջն է, Վիլայէթները կը համապատասխանեն մեր գաւառներուն, ու կը բաժնուին կուսակալութիւններու և Նահանգներու, Ատանայի Վիլայէթը բաժնուած է չորս կուսակալութիւններու, որ են Ատանայինը, Գոցանինը՝ Արս մայրաքաղաքով մէկտեղ, կէպէլ-Պէրէքիթինը՝ Եարրովի մայրաքաղաքով, և Իթէլլիինը՝ Սեւեկիս մայրաքաղաքին հետ Անտառներէն շատերը կոյս են և անծանօթ, ու Լիբանանու հոչակաւոր անտառներուն չափ կարևորութիւն ունին:

Իեռ քանի մը տարի առաջ, իտալացի որորդ մը, Տակրոս լեռներուն վրայ որս փնտելու համար շատ ներսերը երթալով՝ Տէրութենէն իսկ անծանօթ մնացած փառաւոր կոյս անտառ մը գտաւ : Բանը յայտնեց Ատանայ գտնուուած անզիացւոյ մը, և սա՝ իր ցեղին գործնական բնազդին շդաւելու համար, տեղույն վրայ զնաց և ստուգելով որ մեծ պատառ մըն էր անտառին զրաւումը, ուղղուեցաւ դէպի Անզդիաւ : Գտաւ զրամատէրը, փնտեց ձեռնհաս ճարտարագէտները և զարմանալի յաջողութեամբ գործին ձեռք զարկաւ . և այս անտառը, մինակն աւելի փայտ կ'արտադրէ քան թէ բոլոր միւս անտառները միասին : Ծնդունուած առանձնաշնորհուումը 25 տարուան համար է, կիլիկեան անտառներուն յատուկ բրերն է ճերմակ իւէֆը, որուն տարեկան յուղարկուումը կը հասնի 300 տակառաչափի :

\*  
\*\*


Գաւառիս կլիման, ինքն ալ Արկելիոյ և հարաւային խոտալիոյ հետ լայնութեան մի և նոյն աստիճաններուն մէջ գտնուելով, կը նմանի յիշած երկիրներուա կլիմային,

ամառը՝ աւելի խղդուկ տարցով մը, և ձմեռն աւելի կակծեցուցիշ ցուրտով մը, որուն պատճառն է դաշտային հարթութեան մեծ տարածութիւնը : Տարեկան բարեխառնութեան միջին աստիճանն է 21° Հար. ձմեռնայինը 14°, ամառնայինը 29,5° : Ջենոր սակայն Ատանայի մէջ մինչեւ զրոյ և աւելի վար ալ կ'իջնէ աստիճանը, և անհրաժեշտ է վառարաններու գործածութիւնը : Ամառնային տարցը, որ երբեմն շուրջն մէջ 45° ի կը բարձրանայ, այնչափ է որ ամէնքն ալ բացօթեայ կը քնանան, և անոնց որ չեն կրնար լեռներն երթալ «Ճիալիա» կոչուած ալպիան ամարանոցներու մէջ, իրենց բնակութիւնը, առ նուազն քանի մ'ամիսն, բաց երկրի վրայ կը հաստատեն, այս պատճառու ալ շատ գիւղեր բոլորովին անապատ կը զառնան :

Տանիքներու վրայ, որոնց բոլոր տափարակ են, գեանէն որ և է բարձրութեան վրայ, ուրիշ բան չի տեսնուիր եթէ ոչ մահճակալները : Հետաքրքրական է տեսնել այն տուներն ու քաղաքներն այս առկախեալ ննջարաններով, բոլորն ալ ծողերով ու ծածկոցներով, առաջինները՝ վեր բռնելու համար բրդալից անկողինները որոնց մէջ կը փաթթուին երը կը քնանան, և երկրորդները՝ ծածկուելու համար անզգոյց աշբերէն զատ կծու օդէն ու ճճիներէն :

Այս բացօթեայ կեանքը կը տեէ մինչեւ հոկտեմբերի կէսերը, և այն ժամանակները ստէպ կը պատահի որ առաւտական ցուրտը սաստիկ կը զգացուի, և նոյն առեն կ'արժէ տեսնել ժողովրդեան յանկարծակի զարթնումը՝ որ զանավիժմարը սենեակները կ'իջնեն սթափեցնելու համար թմրած անզամները :

Այս առանց անպատճենութիւններու և առանց ո՛ւ և է վտանգի մը բացօթեայ պաոկիլը, ապացոյց մ'է Ատանայի կլիմային առողջութեան, որ բաց աստի, փորձուած է նաև բնակիչներուն տեսրէն՝ որ շատ աւելի կորովի և շնորհալի են քան ուրիշ երկիրներունը . անոնց վառվունութեան և զուարթութենէն, որ շատ քիչ



ԶԼՅԹՈՒԹ

անգամներ կը տեսնուին այն տեղերը ուր կլիման զեռ փափաքիլի կէտեր կը թողու և առողջապահական պայմանները շատ գոհացուցիչ չեն:

Բաւական ուժով կը փչեն, մանաւանդ գիշերահաւասարներու միջոց հարաւային տաք և խոնաւ հովերը, ամենանուրը փոշի ամպեր բարձրացնելով՝ որոնց ամէն տեղ կը թափանցեն: Ջմեռն ու գարսնը հիւսիսային ամենացուրտ հովերը կը փչեն, ու ժողովուրդն այն միջոցին շատ սիրով կը փակուի « զըշա »ներու կամ ձմեռնային բնակարաններու մէջ՝ Ելեկտրականութեամբ յագեալ մինուրուրը ստէպ կատաղի մրրիկներ կը ծնանի. փայլակներու ծամածուռ ծածանումներ և ելեկտրական պայթումներու տարածուող շողիմներ՝ երկինքը կը լուսաւորեն, բայց, զարմանալի՞ բան, որուումը քիչ անգամներ կը լսուի:

Չեն պակսիր տեղեր ուր կը տիրէ ջեր-

մային ուր կամ օդաչերմը (malaria) զոր կը պատուաստն երկու տեսակ մժուռկներ (anofele), — և ճիշտ ասոնց խայթուածներէն ազատելու համար բացօթեայ կը պառկին՝ բարձր տեղեր ու բրդալից բաներու կամ հաստ ծածկոցներու մէջ լաւ մը փաթթուած: — Օդաջերմի կեղուններ են Մ'երսին, Մ'ամուրէ. օդաջերմը կը սաստկանայ նաև ուր որ շատ կան լճացած ջուրեր: Բաւական տարածուած հիւսնդութիւն մ'ալ կայ աչաց, il tracoma կոչուածը: Այս հատաւոր աչացաւը, կը տառապեցնէ այնչափ երիտասարդներ՝ որ ցաւալի է տեսնել անոնց շրջազայիլը, կարմրացած, արցունցով լի, և ցաւազին աչքերով, եթէ աչքերնուն առջև վարագոյր իջած կամ բոլորովին կուրցած չըլլան: Եատ զոհեր կ'ընէ նա այն ամէն տեղ ուր կը տիրեն տաճիկները, պատճառն է աղտոտութիւնը և բազմութեան խանուիլը: Ատանայի մէջ սակայն, այս պայմանները, ծանր ըլլալով

հանդերձ, մեղմագոյն են քան Պաղեստի- Միայն ձմեռն է որ կ'անձրէէ, և այն-  
նու և Ասորիթի ուրիշ քաղաքներու մէջ. չափ առատ է ջուրը, որ՝ զայն վազցնելու  
և Արևելքի այս գաւառներու մէջ մեծ ար- որ և է կարգադրութեան մը թերութեան  
դիւնց ունեցաւ՝ իտալացի Քարոզիչներու պատճառաւ, զաշտավայրին մեծ մասը կ'ո-



Արտ

ազգային Ընկերութիւնը, որ շատ տեղեր ձրի բժիշկներով խնամատեղիներ հիմնեց, և Երուսաղեմի մէջ՝ մեծակառոյց իտալական հիւանդանոց մը»

զողէ, ու շատ տեղեր անկարելի կ'ըլլան յարաբերութիւնները։ Ճամբանները, որպէս զի անցանելի ըլլան, պէտք են շինուիլ գետնի մակերևոյթին վրայ տեղ տեղ փո-

ըրիկ կամուրջներով։ Ռուբի հետք  
մը, որ՝ կը կորէ կանցնի դաշտե-  
րը, անիւներէ ծեւացած խոր հետ-  
քերով ընդհատուած երթեմն փո-  
սերէ և առուակներէ, քարերով  
ու խիճերով սփոռուած, և եղա-  
նակին համեմատ փոշիով կամ  
ցեխով ծածկուած։ ահա տաճկա-  
կան ճամբար մը։ կամուրջներ  
չկան, կամ եթէ զանուին ալ,  
կը բարձրանան յաղթական կա-  
մարներու նման և առանց որմա-  
նիւսի խճարկուած յատակը ան-  
կարել կ'ընէ կառագերու անցը։

Այս ողողումներն, ուր որ թէ

կը տևեն, շատ լաւ կը պարարտացնեն  
կիլիկիոյ ու նաև Աստավիոյ դաշտերը, որ  
անոր սահմանակից է, հարստացնելով  
զանոնց շարունակ' լոռնակողերէն խլած  
կտորներու կոյտերով։

\*  
\* \*

Այս գաւառն ունի 400,000 բնակիչ,  
որուն 70,000ը Մերսին, 30,000ը Տար-  
սոն, 100,000ն ալ Աստանայ կը զանուին,  
իսկ մացածները ցրուած են 280 ի չափ  
փոքրիկ քաղաքներու և գիւղերու մէջ։  
կրօնցին գալով այսպէս կարելի է բաժ-  
նել, 170,000 ըրիստոնեայ, 160,000  
միւսիւման, 70,000 այլ և այլ կրօն-  
ներ։



Աւերակը Սելլակիոյ

թէ այս գաւառը հարուստ է, մանա-  
ւանդ թէ ամենահարուստ, կը ցուցնէ զայն  
ամէն քաղաքներու մէջ տեսնուած զար-  
գացումն ալ, բայց մասնաւրապէս Մեր-  
սին մէջ, որուն անունը ծագած է հա-  
պալասիէն (mirtillo) որ թուրքերէն ճշշդ  
«Մերսին» կը կոչուի, ու կը տիրէ բոլոր  
անտեսուած և անմշակ մնացած երկիրնե-  
րուն, ծածկելով զանոնց ամբողջովին իր  
փոքրիկ տունկերով, ու բոլոր նաւակայրեւ  
կը շրջապատէ կանաչագոյն հարթայա-  
տակով։ Այս նաւահանգիստով օժառուած  
քաղաքը, Փոքր Ասիոյ միակ զուոր որ  
իրապէս գործունեայ ըլլայ մեր նաւար-  
կութեան զիծերուն համար, կանգնուած է  
կես քանի մը տարիներէ ի վեր, և զայն  
կը պարտինց իապրահիմ Փաշային, որ ձեկ-  
նաւէտ գիւղակի մը խորշին մէջ,  
ինչպէս էր Մերսին, իր նաւաերուն  
ապահով խարսխարկէք մը գտաւ։  
իապրահիմ որդի էր այն նշանաւոր  
Մեհմէտ Ալիին, կառավարիչ Ե-  
զիապոսի, որ այնչափ տաճնա-  
պեցուց կ. Պօլսոյ Սուլթանն, նոյն  
իսկ վասնզի ենթարկելով անոր  
գահը։ Դեռ կը ցուցնեն իրմէ մնա-  
ցած քար զնակները՝ որ գործա-  
ծուեցան իր մեծ արշաւանքին ժա-  
մանակ Ասորիցին տիրելու հա-  
մար։ իապրահիմ Ասորիցը գրաւեց  
1832-1839, և յիրակի զայն կա-



Սելլակիա

ռավարեց զարմանալի կերպով մը, հոյակապ յուշաբաններ ալ թողլով։ Ստիպուեցաւ թուրքիոյ զարձնել այս գաւառը՝ երբապական Տէրութեանց բռնադասիչ պահանջներով, որոնք կը վախէին որ Եղիպտոս ասիական ուժ մը ձևացնէ։ Երբ Խարահիմ իր գործին հիմք դրաւ Մերսինի մէջ, իրեն հետևեցան յոյն և նոյն իսկ իտալացի ընտանիքներ, մասնաւորապէս արեւելցիներ՝ որ հոն հաստատեցին իրենց բնակութիւնը։

Նաւահանգստին ապահովութիւնը՝ ոչ միայն Առանայի, այլ նաև Հոնիափի և Ավազի Գաւառին բերերուն՝ իրեն բնական ելք համարուեցաւ, և իր շոգեկառավով ունեցած ուղղակի յարաբերութիւնը կ. Պօլոյ-Գոնիմա-Պաղտասի հետ, զինքը Գարամանիոյ և Միջազգեստի միակ դուռը ըրին։ Աւստի շուտով Փոքր Ասիոյ նաւակայր ունեցող զիւաւոր քաղաքներէն մին պիտի ըլլայ։

Հին նաւակայցերը, աւագի տակ թաղուած ու անհետացած են։ Նոյնպէս նաև Տարսոսինը կիւղնոսի վրայ, յորում շրեցութեամբ մտաւ կղէուպատրա՝ ոսկի եռաթիով մը։ Ելեմուտը 160 միլիոն քիլոկրամը կ'անցնին, 57 միլիոն քրանըի համարժէք։ Նաւերու ապրանքը 1913ին 797 հազար տակառաչափի ելաւ՝ հակառակ նախորդ տարսոյն 660.000ին։ Խտալիա հոն կը մտնէր 115.300 տակառաչափով։

Ճամբանները շատ կը կարօտին նորոգութեան, բայց յարատե շարժման մէջ են ու ամէն տեսակ մարդու կարելի է հանդիպիլ։ Մերսին՝ բոլորովին արեւելան քաղաքներու տեսք մ'ունի, բայց համաշխարհական գոյնով ու եւրոպականանալու ձգումով մը։ Չունի հոյակապ շէնքեր, եւրոպական շէնքերն ալ, ինչպէս են հիւպատոսական տունները, այդ կոչման չեն արժանանար։

\*

\*\*

Մերսինի, ու դեռ աւելի Առանայի մէջ, Առանայի վիլայէթին ամէն տեսակ ժողովուրդներու ներկայացուցիչներ կան. ա-

նոնց իւրաքանչիւրը, իր յատուկ թաղն ունի, և իրարմէ կը զանազանուեին հագուստով, կրօնցով, լեզուով, աշխատութեամբ։ Գիւխաւորներն են թուրքերը, Զէրքէզները, Քիւրտերը, Թուրքմէնները, Գնչուները կամ թափառաշրջիկները, Ֆէլլահներն, Արարները, Յոյները, Հայերը, Պարսիկները, Հուսկ եւրոպացիներն՝ երեքմն լատին կոչուած։ Կայ նաև կրետացի փախստականներու թաղ մ'ալ, և երթալով գիւղեր կը կազմուին Մակեդոնիոյ և եւրոպական թուրքիոյ փախստականներէն, որոնց Մերսինի մէջ վրանարնակ տեսայ։

Թուրք տիրապետութեան ենթակայ երկիրներու մէջ, զանազան կրօնցներու հետևողները կը կազմեն անկախ հասարակութիւններ, որոնց վարիչը կրօնական զլուխնին է, և որոն իշխանութիւնը քաղաքական ալ է։ Իրեն կ'իյնան տուրքերու հաւաքումը, հպատակներու և զործոց արձանագրութիւնները, տուրք զնելը, օրինաց և պաշտօնական ծանուցումներու ծաւալումը, կրօնը հոմանիշ է ազգին, որ թուրքերէն Միլլէթ բառով կը նշանակուի, և թուրքը այս կէտին մէջ բաւական զիջանող է։ Քաղաք մը այնչափ քաղաքապետներ ունի՝ որչափ են ներկայացուելիք կրօնցները, ու քաղաքապետները հաւատացեալներէն կ'ընտրուին։ Այսպիսի և նման արտօնութիւններ և առանձնաշնորհութեաններ, բազմաթիւ զլուխներու մէջ ցանկուած, ուսկից կ'առնեն դաշնադրութիւն (capitolazione) կոչումը, թուրքերը շնորհած էին իրենց հպատակ այլազաւան ժողովուրդներու և կամ անոնց՝ որոնց հետ հարկ էին զիխատանքի, վաճառականութեան և կամ պարզ բարեկամութեան յարաբերութիւններ ունենալ։ Այս արտօնութիւնները աւելի կամ նուազ ընդարձակ էին ընդունող ժողովը զեան, ազգին, ուժին և կարևորութեան համեմատ։ Սահմանադրական կառավարութիւնը անոնցմէ շատերը չնշեց և այժմ անցեալ տարւոյն հոկտ. 1էն սկսեալ ամէնըն ալ լնջուեցան, և ամէն որ հասարակաց իրաւանց մէջ կը մտնէ։

\* \*

պէոպօլսոյ աւերակները, Հինն Աօլի, որ  
Մերսինէն 14 հզմ. հռու կիյնայ: Աօլի  
հիմուսցաւ Արգիւներէն և այնչափ ծաղ-  
կեցաւ որ Աղերսանդր Մեծն կրցաւ բնակ-

կիմիկիոյ իշխող այլ և այլ պետութիւն-  
ներէն ամենէն աւելի հետքեր թողուցին



Մ. Ա. Խ.

Հոռվմայեցիք, որ ամենուրեք ամենածագ-  
կեալ բաղաքներ կանգնել տուած էին:

Առալիայէն յառաջելով, դէպ ի արե-  
սելք, Սելևկիայէն վերջ, կը գտնենք Պոմ-

չացալը 200 տաղանդի տուրք մը գնել,  
որ է 1,112,000 ֆրանք: Հայոց թագա-  
ւոր Տիգրանէն կործանուելով, նորէն ծաղ-  
կեցաւ Պոմպէոսի ձեռքով, որ հոն վտարեց

այն ծովահենները որոնց յաղթած էր, այդ նշանաւոր պատերազմին մէջ, որուն ձեռնարկեց Ասորիքը ասպատակութիւններէ և աւարառութիւններէ ազատելու համար :

Հռովմէական մեծութեան յաւիտենական յիշատակ կը ման հոյակապ անդաստակ մը ձեւացնող 200 սիւներէն մէկ քանին, ու թատրոնին մասցորդները Հինն Սօլիի քաղաքացիները այնչափ գէշ կը խօսէին յունարէնը, որ Solécisimo բառը հոմանիշ Թաց քերականական սխալի:

Ինչպէս Սօլիէն, այսպէս ուրիշ շատ մը քաղաքներէն, որոնց յուշարձաններ զբանուած են և դեռ երթալով կը գտնուին, ինչպէս դաշտային կիլիկիոյ մէջ՝ Մալլոյ, Հիսոս, Անազէվ, և Թրակեան կիլիկիոյ մէջ Սելինոսու և կելենտերիս, անրնակ աւերակներ միայն մասցած են, որոնք ժողովրդեան մը գործոնէութեան տիսուր վրկայութիւն մը տալու համար կանգնած են, պարարտ բայց անմշակ երկիրներու վրայ՝ տեղ տեղ մերկ, և ուրիշ տեղեր փշալից մացաններով ծածկուած, վիթերու և կինճերու ազատ դաշտավայր մը:

\* \*

Քիչ պահպանուած քաղաքներէն մին է Տարսոն, հոռվմէական մեծ քաղաքը, ուր պատրիկներ և կայսրներ դպրոց կը դրկէին իրենց որդիքը, և որով հեթանոսաց Առաքեալը կը պարծենար իրքն «այր հոռվմայեցի»։ Զետեղուած է ծովէն 12 հզմ. հեռաւորութեամբ զաշտավայրի մը վրայ կիւղնոսի և շատ սիրուն ամարանոցներով զարդարուած բլրակներու շղթայի մը և հին աւերակներու վրայ կանգնուած զիւղակներու միջն գտնուած զաշտավայրի մը վրայ, շրջապատուած արզաւանդ զաշտերով ու այզիներով՝ որոնց ճիւղերն առատ ողկոյզներու ծանրութեան տակ կը ճկնէն :

Այդ բլուրներուն վրայ սրանչելի է կիման, ընդհանուր տեսարանն անպատմելի, և, որոնց որ կրնան, հոն կ'երթան ամառը անուշարոյր օդը շնչելու՝ աւելի զով կիմայի մը մէջ ապրելու համար։

Տարսոն ծածկուած կը մնայ այցելուին աշքերէն, Ֆելլահներէն մշակուած բանջարանոցներու և պարտէզներու բազմու-



Աւերակը Գոմպէուպոլսոյ

թեան պատճառաւ, ու այս կանաչութիւնն ներուն մէջ կը կանգնի քաղաքը իր եկեղեցիներով, մզկիթներով ու հարթ-տանից տուներով։ ԱՌՀԱՓ հին աւերակներ և

դեցկութիւններէն մին էր։ Մէկ քաղաքիկ մը, իր գետով, որ հիմայ իր արուարձաններէն 1 հզմ. հեռուէն կը վագէ։ Մեծղի պարիսպ մը, որ կ'ըսուի թէ շի-



Արդարաստանի Խաղբուժի  
Արդարաստանի Խաղբուժի

ՀԱԿԱՅ յուշարձաններ. ու դեռ ո՛րչափ ալ, թերեւս աւելի կարեռութիւն ալ ունեցողներ պիտի գտնուին. ինչ է այսօրուան Տարսունն հռովմէական հին քաղցին առջև՝ կիւղնոսով կտրուած՝ որ իր զլխաւոր գե-

նուած ըլլայ ամիրապին Հարուն-էլ-Շիաշիտէն, քաղցին մէկ մասը կը շրջապատէ. և դուռի տեղ ունի տարօրինակ բացուածքներ. հռովմէական շրջապատէն դեռ կը մնան քանի մը մասեր և լ. Պօղոսի կոչուած

դուռ մը: Յայտնի է որ այս զբան վրայ եղած են նորոգութիւններ, որոնց ներքեւ կը տեսնուի հոռովմէական դրան նախկին կազմութիւնը՝ բաւական լաւ պահուած: Այս որ պալատներ կը բարձրանային և ջուրերու ցայտումներով զուարթացած գեղեցիկ պարտէզներ կը ծաղկէին, հիմայ կը տարածուի ճախճախուա անծայր դաշտագետին մը՝ գրատէրու և օձերու աշխարհ մը: Ճաճնային խոտերուն տակ, որ դեռ կը աեսնուին ջուրի հին ճամբաները, քարաշէն ջրամբարներ և ուրիշ շինութիւններ գտնուեցան: Բայց որո՞ւ փոյթն է: Կառավարութեան չէ անտարակոյս, և ոչ ալ ուրիշ Պետութեանց այցելուները, դժբաղարար միայն զերմանացիներ, աւատիացիներ և ամերիկացիներ, կը գոհանան՝ առ հասարակ ծանօթ հնութիւններով, և միւսներով բնաւ չեն զրադիր:

Այսէն հետագրքրական յուշարձաններէն մին է Տէսնիւր - Թաշչն կամ Շրջուն Քարը, ծանօթ՝ իրրե զամբան Սարդանարադի: Խոռուացարի (pudinga) ժայռ մըն է, որ, կը գտնուի քաղքէն դուրս պարտէզի մը մէջ և զուգահեռազիծ ձև մուռի, 87 մեր երկայն, 42 լայն, և 8 բարձր, և մէջտեղն ու ծայրերը ուրիշ խորանարդ կոյտեր:

Ուշագրաւ յուշարձան մըն ալ է մզկիթը, նախապէս քրիստոնեայ տաճար մը, նուիրուած Ա. Պօղոսի, ինչպէս կիլիկիոյ ամենէն գեղեցիկ մզկիթները քրիստոնեայ եկեղեցիներ էին: Խոկ Տարսունին մէջ սքանչելի են քանդակներն ու ներքին դրուագները: Արձանագրուած բազմաթիւ քարեր ասպին անդին ցրուեցան և մինչև իսկ շրջապատի որմեր շինելու գործածուեցան:

Տարսոն կը ջանայ ձեռք բերել նորէն իր մեծութիւնը, ձեռնոտու ունենալով Մերսինի շողեկառըն ու նաւահանգիստը որ 25 հզմ. հեռուն: Է: Կերպոն՝ դաշտային ամենահարուսա Գաւառի մը: Հոն կը խուժեն ներսներէն վաճառականներ իրենց արտադրութիւններով, որ են բուրդ, արմտիք, մոմ, բամպակ: Ջրանացի հեղինակ մը

30 տարի առաջ կը գրէր թէ միրանսա այդ ժամանակներուն իրն սեփականած էր բոլոր այն վաճառականութիւնը, որ ատենոց կեղողնական խոսլիան միայն կը կատարէր այս նաւահանգստին հետ:

Կը յիշէ Տարսոն որ լատին Աւողդա- ֆառ եկեղեցին, վանքն ու յարակից զր- պրոցները, անոնց ալ Հ. Բարսեղէն կա- ռուցուեցան: Հիմայ հոս ալ ամէն ինչ գրանսական է, ինչպէս ֆրանսերէն է էն շատ խօսուած օտար լեզուն:


Սակայն Պազտատի շողեկառըն երկայ- նութեամբ, թէ այն պատճառաւ որ պաշ- տօնեաններէն ումանց կու գան խսկենտերու- նի և Հալէպի իտալական դպրոցներէն, (ա- ռաջինները՝ կարմեղականներէն վարուած և միւսները Փրանկիսկաններէն, ձեռնոտու ունենալով խտալ Միսիոնարներու ազգա- յին Ընկերութիւնը), և թէ միանգամայն մեր գործարուներուն շվիմամբ, յարատե ախորժելի անակնկալը կունենանց խտա- լերէն խօսիլն լսելու: Դպրոցներու միջո- ցաւ խտալերէն լեզուն տարածելով է, ա- մենազնի գործ մը «Տանդէ Ալլիկէրի» էն ալ առաջարկուած, որ կընանց տարածել մեր և մեր Երկիրն համակրութիւնը:

Այս տեսակէտով չեմ կընար չմիշել իմ մէկ դէպրոց որ տեղի ունեցաւ Պազ- տատի շողեկառըն մեծ փապտղուոյն մէջ՝ խտալացի աշխատողներու մէկ այցելու- թենէ դարձիս:

\*  
\*\*

Կը մթննար, և ես Կիշնէի, ութ ժա- մուան արշաւանցի մը համար ծիավարե- լէ վերջ, ամայի հովիտներէն որ Մամուրէի շողեկառըն կայարանը կ'առաջնորդին: Լուութիւնը, ընդհատուած երբեմն հովուի մը հեռաւոր ճայնէն որ իր հօտը խմրուե- լու կը կանչէր, աւելի խոր և ազդեցիկ կը թուէր լուսնի ամէնառաջին պայծա- ռութեան տակ, և ես կը յառաջէի, սիրոս հայրենարադ սուր զգացումէ մը նեղուած, ինչ որ մերթ կը հանդիպի ձեզի հայրե-

նիքէն հեռու լոին դաշտավայրի մանսահան մանուկներ տեսայ, որ կամացուկ մը ման միայնութեան մէջ ժամէ մ'ի վեր հետքերուս հետևեր էին և, ինձ համելով կը ճամբորդէի, երբ անկարծելի մանկա կ'ողջունէին զիս մեր լեզուին սիրելի հըն-



Արդարաց

կան փայլուն ձայն մը ետևէս վեր բարձրացաւ «թարի իրիկուն պարոն» ով մը՝ իտալերէն արտասանուած։ Զարմացած և յուզուած՝ դարձայ և բանի մը թուրք

չումով։ «Ի՞նչպէս, հարցուցի ապշած, իտալերէն զիտէք։ Պատասխանեցին թէ սորված են այն իտալացիներէն որոնց ներքնուղիներու մէջ կ'աշխատէին, և օ-

տարականներու հետ ալ միշտ նոյն լեզուն կը գործածէին: Ու այսպէս մանկաբար խօսակցելով ընկերեցին ինձի, մինչեւ որ ճամբրո զարձի մը հանդիպելով ցոյց տուվին. «Այս, այս կողմէ է մեր առուն», և ազնուարար կրկնելով քաղցր ողջոյնը, որ զիս յուզած էր, հեռացան, անշուշտ շատ ուրախ՝ իտալացոյ մը հետ խօսած ըլլալուն և իրմէ գիտցած ըլլալուն համար շատ բաներ զորս հարցուցեր էին մանկական հետաքրքրութեամբ մը այն խորհրդաւոր իտալիոյ վրայ, զոր կը խօսառովանէին թէ կը սիրեն առանց ճանչնալու, միւս օտարականներէն աւելի ախորժելի ըլլալով իրենց իտալացիները: Այս գէպըը, թէպէտ աննշան ինքն իր մէջ, ինձ կը թուի սակայն ցուցնել թէ ո՛րշափ պիտի տարածով մեր համակրութիւնը այն երկիրներուն մէջ, եթէ աղքատ մանուկներ հետամուտ կ'ըլլան մեր լեզուն սորվելու և նախանձաւոր կը ցուցնեն ինքինքնին զայն խօսելու:

\*  
\*\*

Այս վիլայէթին աշխարհազրական զիրքը ամենանպաստաւորներէն մին է, ճամբրորդութեան և վաճառականութեան կարևոր կեղրոն մ'ընելու համար զայն: Եւ այս, աւելնալով երկրին հրաշալի պարարտութեան և ընդերկրեայ հանքային անսպառ հարստութեանց վրայ, չափէն աւելի կ'աւելցնէ իր ունեցած արտաքոյ կարգի կարեւորութիւնը:

Զետեղուած ըլլալով Փոքր Ասիոյ ծայրը. Ասորիքի սահմաններուն վրայ և Միջազիւրքի ու կեղրոնական Ասիոյ Կոնակը, և Միջերկրականի բարերեր ծովափին վըրայ երկնալով, իսկենաներունի ծոցէն մինչև Աստալիոյ ծոցը՝ իրդե բնական նաւահանգիստ կը ծառայէ՝ այս երկու սահմաններուն մէջ եղող կեղրոնական Ասիոյ բոլոր գաւառներուն, և ասոնց ու օտարին միջն միացման բնական կէտն է, անհրաժեշտ միջնորդ այն ամէն բանի որ ծովով ներս կը բերուի կամ կը յուղարկուի,

Այս է Միերսինի նաւակայրին յարատե զարգացման պատճառը և կը բացատրուի ասով՝ որ կ. Պօլսէն Պաղտատի մեծ երկաթուղին, որուն շինութիւնը և գործածութիւնը գերմանացւոց յանձնուեցաւ, բոլոր այս Գաւառը կը կտրէ, գլխաւոր կայարաններէն մին ընելով Աստանա: Արտօնատէրը ուզեցին իշխել տեղացւոց մտաւորականին վրայ շինութիւններով ալ: Այս զծին բոլոր կայարաններն ալ շատ լաւ շինուած են, հաստատուն, ճաշակով և վայելուչ, ինչ որ կարելի չէ բայց Միերսին-Տարսոն-Աստանայի հին զծին կայարաններուն համար:

Գոնիա-Պաղտատի շոգեկառաք երեք մասերու կրնանը բաժնել. առաջինը Գոնիայէն Պուրկուրուու, երկրորդը Պուրկուրուու-Աստանայէն էլ Հելիֆ՝ Ամանոսի հոգակոյտը կտրելով, երրորդը էլ Հելիֆէն Պարսից ծոցը:

Առաջին մասը արդէն իսկ գործածութեան մէջ է, երկրորդը (որ ճարտարագիտական աւելի մեծ աշխատութիւններ կը պահանջէ հարկադրուելով ծակել Տարուը, Պօզանդիի և Տօրաքի միջն, և Ամանոսն Այրանի և ինթիլիի միջն), չի բանիր բայց եթէ միայն զաշտային մասերու մէջ, այսինքն է Պուրկուրուուն Պօզանդի, Տօրաքին Մամուրէ, Հալէպէն ծերապիսի՝ Եփրատի վրայ. և Տարուը կտրող ներքնութիւններու աշխատութիւնը Պօզանդիի և Տօրաքի միջն, առկախ մնաց Երոպական պատերազմի պայմումէն թիջ ժամանակ առաջ: Եւ այս մասին մէջն է որ շոգեկառաք կ'անցնի կիլիկիոյ նշանաւոր դաներէն՝ ուսկից հարիր անգամներ անցան ժողովուրդներ, որոնց այս դիւթիչ դաշտավայրը իրենց կոփէններուն ասպարէզն ու իրենց հանգստեան վրանատեղին ըրին: Երրորդ մասին աշխատութիւնները դեռ սկսած չեն:

\*  
\*\*

Մամուրէն Հալէպ եղած գիծը, դեռ շինութեան մէջ, զմեզ շատ աւելի կը

Հետագրքը իրը կիծ մը յորում հարիւրաւոր խտացիներ (որոնցմէ այսօր զբեթէ 200ը միայն կը ման) անողոք պատերազմին ծագելէն առաջ, կ'աշխատէին այն ներքնուղիները բանալու որ կը կարեն Ամանոսն, և որոնց պիտի ըլլան այն դռները որ կիլիկիան՝ ուղղակի յարաբերութեան մէջ պիտի դնեն Տիգրիսէն և Եփրատէն թրջուող զաշտավայրերուն հետ:

Պաղտատի շոգեկացին համար աշխատող գործաւորները կը ներկայացնեն իտակիոյ բոլոր գաւառները, բայց մասնաւրապէս Վենեթոն, Աշխատութեան գլխաւոր կեդրոնն է Այրան, Կիլիկիան շոգեկառքի Խզելլէն:

Կ'ուզէին վերցնել մեր ականափորներն ու որմաղիրները, բայց չչաջնղեցան. գործերն առաջ չէին երթար և ըրած քիչ մը աշխատութիւննին ալ լաւ չէր կատարուեր: Հանրային Վարչութիւնը, հակառակ իր կամքին, ստիպուեցաւ մեր աշխատաւորներու դիմել:

Սակայն աշխատութեան պայմանները չէին համապատասխաներ դուրս կատարուած իտալական աշխատութեանց համար մեր իմաստուն կարգադրութիւններուն: Ասկից է ահա Արքունի զերհիւպատուին կարեւոր միջամտութիւնը, որ կարգի դրաւ գործաւորներ ու շնորդները, և "չ միայն իտալացւոց բարեկեցութիւնը ձեռք բերաւ այլ նաև ընդունեցաւ որ ամէնքն ալ, հանդերձ բնիկներով, ճանչնան իտալոյ հեղինակութիւնը և անոր խնամքը իր որդեւոց և պաշտպանեալներուն ամէն բանին վրայ:

Մեծագոյն ներքնուղին, որ 750 մեդր բարձրութեան մը վրայ կը գտնուի, և է երկայն 4904 մ. 1914, հոկտ. 1ին ասոր 3390 մ.ը միայն բացուած էր: Ծակումը, որչափ որ երկու կողմերէն ալ կը յառաջէ, այսինքն է Այրանէն, Առանայի զարիկալրէն, և Խմբիլլէն, Հալէպի զառիկայրէն, զանդագորէն առաջ կ'երթայ օրը Զէն 2<sup>½</sup> մ. գտնուած ամենակարծր կայծքարին պատճառաւ: Ասոր համար աշխատութիւնները փոխանակ 1915ի,

1916ին պիտի լմնան եթէ անակնկալ պարագաներ տեղի չունենան: Բոլոր այս գծին վրայ 14 ներքնուղիներ կան, 8600



Ասոր բերդը

մեզր ամրողական երկայնութեամբ: Առողջապահական պայմանները բաց է իշարպաշին, ուր ոմանց օդաջերմէն ըլլունուած էին, բաւական լաւ են, իտալացւոց, թոշակն ալ գոհացուցիչ: Իտա-

լացոց համար կ'ըսեմ, որովհետեւ բոլոր Առանա միացած է խսկենտերունի հետ տեղացի գործադրութերը կը զանգատին ձեռք շոգեկաուցով մը, որ զուտ օսմանեան ար նարկէն և դժկամակութեամբ կ'աշխատ տօնութիւն մը պիտի ըլլար, հիմայ Դիբ-



Սլո

տին : Շարժուն նիւթերը Գերմանիայէն կու գան, իսկ կամուրջներու համար, ինչպէս Առանայի մէջ Սիհունի վրայի կամուրջին համար, մասամբ Անվերսայէն կու գային :

մանացիներէն գրաւուած է, ինչպէս պատահեցաւ Մերսին-Տարսոն-Այանա հին գծին : Շոգեկաոցն անտարակոյս պիտի փոխակերպէ այս գաւառը, եթէ լաւ կառա-

վարութիւն մը և հասկցող դրամատէրներ գիտնան համերաշխութեամբ աշխատիւ:

\* \*

Այս ճգնաժամի օրերուն, ուտեսադին սուզնալով, կիլիկիոյ, այս երջանիկ գաւառին անսահման դաշտերուն մտածութիւնը յիշեցուց ինձի Պատպէսուր, որ երր Հոռվմայ ժողովուրդը հայի չպահպանց սուզնալէն կը կը էր, Աննոնաի քաղաքափես անուանուելով, եկաւ կիլիկիոս, ուսկից ի Հոռվմ պաշար ուղարկեց, այսպէսով անմիջապէս իջեցնել աւալով հացին գինը, և ժողովրդեան համարմունքը շահելով:

Ճեսայ կիլիկեան գեղեցիկ զաշտերը բամպափի հաւաքման մէջոց, և այդ հարիւրաւոր կիները, մարդուկը, տղաքները, ծուած՝ ինչպէս մեր մէջ րինճ մաքրողները, հասուն բամպակին ճերմակ գնդակներով բանուած անծայր կանաչ զաշտերու մէջ, արագ արագ լեցնելու համար սապատները, հետաքրքրական և նկարչական տեսաբան մը կ'ընծայէին: Այդ ստարականի մը մերձենալուն՝ երկշու աշխատաւորներու խումբերը, ոգի կ'առնէին շուտ մը երր դուռ կը հանէի kodak-ս, այն ատեն կը խռնուէին շուրջս, աւելի մօտէն կը սզմէին զի՞ կարծելով լաւ ևս լուսանկարուիլ այսպէսով:

Տագմաթիւ ընկերութեամբ աշխատութիւնը, լաւ շահու մը յօյսը, որովհետեւ, ժողվածնուն տասանորդը իրման է, խոսուն և զուարթ կ'ընեն այս աշխատաւորները, ինչպէս թէ լատին արինէ ըլլային:

Այս գաւառին բամպակի տարեկան արտադրութիւնը 25,000 տակառաշափը կ'անցնի, բայց, զործածուելէն առաջ, աւելի աշխատութիւն և աւելի ծախը կը պահանջէ քան Եզիպոսինը, մի միայն սերմերու ընտրութեան մէջ զիտութեան պակասութեան և երկրին անպատրաստութեան պատճառաւ: Անը մը կը ցանուի մարտին մէջ Միջագետքէն ամրում մը թուրքմէններու, մարերու, որոնց կը

միանան ընչուհիներու և բոշաներու բազմութիւն մը, Ատանայի զաշտերը կը հասնին բամպակը մարերիու և ցորենը հնձելու համար: Ամէն տարի 100,000-120,000 անձանց եկաւորութիւն մը կայ, որոնց բառանական ֆրանք մէլիքի դնելու համար, օրեր ու օրեր ոտքով կը ճամբրորդեն Միջագետքի կիզիչ զաշտերուն մէջէն: Խնչ չամեմատութիւն մեր զուարթ ու բազմաթիւ ըրինճ մաքրողներու եկաւորութեան հետ, որոնց իրենց երկրից կը զառնան զրամի բաւական գումարով մը և բնակութեան ու ճամբրորդելու դիկուրութիւններով նպաստուած:

Բամպակի հաւաքումը կ'ըլլայ սեպտեմբերէն հսկումերէրի մէջ: Բայց որովհետեւ գնդակները զեռ իրենց բաժակներուն մէջ փաթթուած կ'ըլլան, անոր համար, բայց բանի մը հաստատութիւններէ՝ որ բանելու ամենանոր մերենաներով օժտուած են, բամպակը կը մաքրուի ու պատճէն դուրս կը հանուի տան մէջ, ընտանեաց անդամներէն, ինչպէս մեր մէջ մը սրացըրենի քիսաը կը կտրէն: Ծունէն կ'անցնի հատերը բաժանող մերենային մէջ, ու յետոյ կը ծրարուի արտածութեան համար:


Եթէ գիւղացից ընդհանրապէս հեստող են նորութիւններուն ու զարգացման, թուրք գիւղացին շատ աւելի է, սակայն թուրք թէ երթալով կը փոխուին, որովհետեւ ցանի մը տարիէ ի վեր այս կողմերը, դաշտային մեծ շոգեշարժ մերենաները, հերկողները 11-13 խոփերով, հնձողներն ու ցորենահանաները, իրենց զանազան շարժումներով կը լւցնեն ձայներնին կիլիկիոյ զաշտավայրին մէջ: Բերուած են անգիտական և գերմանական գործատուններէ, ու կը շարժին տեղացիներէն, որ ստուգիւ խելացի են:

Հնծող մերենաներու ետեր կը նորոգուին Աստուածաշնչական Հոռութիւններու տեսաբանները, որոնց հասկացաղ կ'ընեն:

Թուրք կիները, և ընդհանրապէս կիլիկիոյ կիները զաշտերու մէջ շատ կ'աշխատին, կը հերկէն, կը փորեն, հօտերը

կը նային, բազմաթիւ վառեակներ կը հացը 20 հարիւրորդէն նուազ կ'արժէ,  
անուցանեն, որոնք, հաւկիթներուն նման, միսը 70էն պակաս:  
բէշ կ'արժէն, այնպէս որ ամէն ժամա-

գաւառին ներսերը, կիներն արծակ կը



(Ձ) Անտառա և Շահումյան պատկեր

նակ կարելի է հաւ մ'ունենալ մէկ ֆրան-  
գով, ու երկոստանեակ մը հաւկիթ 40-50  
հարիւրորդով: Նոյնպէս ուտեսատի տեսակ-  
ներն ալ զիւրագին են. մէկ հազարակրամ

թողուն իրենց երկայն գանգրաւոր մազերը  
որ շատ սիրուն տեսք մ'ունին, նոյնպէս  
նակ Ատալիոյ յոյն կիները: Հարսնացու-  
ները երկայն միակ հիւսուածք մ'ունին,

ինչպէս մեր մէջ փոքրիկ աղջիկները. առուսացեալները առկախ թողած շատ հիւս սուածքներ կը կրեն, բայց քիչ անգամ յասուկ և նոյնագոյն մազերով, որովհետեւ մօրէն ժառանգած կաէ ուրիշ ազգականներէ ընծայ ընդունուած մազերն ալ կը կրեն: Այս երկայն հիւսակները, օծուած ու փայլուն, կոնակնուն վրայ տարածուած, թերեւս հին ալ, շատ մը սերունդներէ մնացած, հետացըրըութիւն և զարմանց եթէ կը շարժեն, յայտնի է թէ մեծ մաքրութեան մը հաւաստիք չեն:

\* \*

Խորհրդաւոր երկրագործ ժողովուրդ մը են ֆէլահները, որ կը բնակին Աստանա, Մերքին, Տարսոն քաղաքներու շուրջը, ուր կը մշակեն բանջարանցներ ու մըրգաստաններ: Ի՞նչ են անոնք: Ի՞նչ լեզու կը խօսին: Ի՞նչ կրօնը կը դաւանին: Խորհրդը մ'է: Եթ սակայն քաղաքներու մէջ կ'ապրին, յարտառ շիման մէջ ուրիշ ժողովուրդներու հետ, մասնաւորապէս վաճառանցին մէջ՝ զոր կ'ողողեն իրենց արտադրութիւններով: Կը գիտոցի միայն, որովհետեւ և յայտնի կը տեսնուի, որ ուրիշ բանով չեն զբաղիր եթէ ոչ մշակութեամբ և պարտիզանութեամբ, ու պարտէզները կը ջրեն ջրիորի ջուրերով, զոր կը քաշեն շղթայահրիս կաէ դոյլերով: Խաղաղաւէր են, հիւրընկալ, իրենց մէջ համերախ, առանց ընտանեկան յարաքերութիւններու ուրիշ ցեղերու հետ: Եթ համակրին քրիստոնէց և եւրոպացւոց, որոնցմէ շատ անգամներ պաշտպանուած են թուրքերու հարստահարութեանց դէմ, պաշտօնապէս իրը միւսիւլման ճանչցուելով հանդերձ:

\* \*

Քանի ժողովուրդներ, քանի ցեղեր կը բնակին այս երկրին մէջ: Ահա Ապտալները, ներքին գաւառներու եղական ազգ մը, մուրացիկ ցեղ մը, որ միշտ կը հանդիպին

Այսանայի փողոցներու մէջ ուրիշ ժողովուրդներու բազմագոյն զգեստներուն հետո: Ահա թուրք պառաւ մը ճամրուն վրայ կը կած: Իրեն ամէն ինչ կը պակախ, և սակայն գործ է, ընդհանուր համակերպութիւն մը ցոյց կու տայ որուն չեմ նախանձիր, ուրովհետո կը զրկէ զմարդ ամէն գաղափարականէ, աշխատանքի և զարգացումի նպատակէ, որ վինքն անգործ զանգուած մը կը դարձնէ և արտացինը միայն կը պնդացնէ օդերու սաստկութեանց դէմ:

Այս երկիրներուն, այս ժողովրդեան համար շատ լաւ կրնանց կրկնել մարդարկին հետ: Ապականեցաւ ապականութեամբ ամենայի երկիր.. և ոչ զոյ մարդ որ յնէ ի սրտի:

Մ'կ կը մտածէ գործ մը տեսնել: Հերկովը դաշտը փորելու միջոց բոյսի՞ մը, աւերիչ մացափի՞ մը հանդիպեցաւ. աղէկ, զայն արմատէն պիտի չհանէ, այլ մէկ կողմը պիտի դարձնէ որպէս զի չզպչի անոնց. բոյսը այսպէսով աւելի պիտի ուռնանայ, և ինքը գեռ աւելի հեռու պիտի տանի իւր շրջանը, մինչև որ սա բազմանալով դաշտը այնչափ ապականէ որ սուիպէ թողուզ զայն: Այն ատեն ուրիշ մը պիտի գնէ, որ դարձնեալ իր կարգին նոյն բախտոր պիտի ունենայ:

\* \*

Կան ցեղեր որ աւելի գործունեայ են, ինչպէս Հասանպէյլիի բնակիչները, առացելութիւն մը որ կախում ունի Ա. Երկրի Փրանկիսկեաններէն, և ուր զրեթէ միշտ, ինչպէս հիմայ, Սպանիացի Փրանկիսկեան Հայր մը կը նստի:

Բոլոր Սպանիացի կրօնաւորները իտալերէն կը խօսին, և իտալիոյ շատ աւելի բարեկամ կը լլային, եթէ կարելի ըլլար փոխաղարձ օգնութեան յարաքերութիւններ հաստատել:

Հասանպէյլիի գաւառը, չորս ժամ հեռու Այրանի ներքնուղիին բերնէն, իրը բլրային երկիր ամենաքեղուն է. Աստանայի վիլայէթին բլուրներն ու հովիտները



Մերսիմ

ամենայարմար են իրքեւ մացառ պահուած որթի և պատողի մշակութեան համար։ Աստանայի վաճառանոցին մէջ, յուլիսին մինչև զեկտեմբեր թարմ խաղող կը գրանուի զոր լեռներու կողերէն կը բերեն էշերով և ուղաբերով։ Զկայ պատողի տեսակ մը որ համեղ և առատ արտադրութիւն չունենայ։ Բանջարեղէնք հոս աւելի ուռացած են քան Սիկիլիա, և կարելի է բազմացնել զանոնք ու տեսակնին բարւոքեւ։

\*  
\*\*

Այս գաւառի բոլոր ժողովուրդներէն, իմացականութեամբ, գործունէութեամբ և զրամական միջոցներով ամենէն նախամեծաբները Հայերն են, որ ամենուրեք եկեղեցիներ և բազմաթիւ զպրոցներ ունին։ Քշուած իրենց երկրէն, թուրքերուն Հայաստանի տիրելու ժամանակ, կիլիկիոյ մէջ հիմնեցին Փոքրիկ Հայաստանը, որ ժողովրդին միշտ աճելով, համերաշխութեամբ և կառավարութեան իմաստութեամբ ազատ թագաւորութիւն մ'եղաւ և

ծաղկեցաւ ու երջանկացաւ մասնաւորա պէս լեռն թ. թագաւորին օրով։

Փոքր Հայաստանի մայրաքաղաքն էր Սիս, 61 հզմ. հեռու Աստանայէ, կեղրոն գաշտավայրի մը որ նոյնպէս ամենարեզան է։ Հիմայ, զրեթէ զիւղի մը վերածուած և առաւելապէս բնակուած զիւղացիներէն և երկրատէրներէ, ատեն մը ծաղկեալ և կարենոր քաղաք մ'էր։ Տասնուշորորդ զարուն, հոն ժողովը մը գումարուեցաւ Հայ Եկեղեցին Հռովմէականին միացնելու համար, Հայոց Կողմէն ընդունուելով հովմէական պաշտաման քանի մ'արարողութիւններն ու մանրամասնութիւնները։ Աթոռ եղաւ պատրիարքութեան մը և ի նշան իր զօրութեան դեռ կը մնան Փոքր Հայաստանի թագաւորներուն զրգեակին կամ Արցունեաց աւերակները։

Խաչակիրներու զարուն Հայերն ալ բուլորովին բորբոքուած սուրբ եռանդէ մը՝ պատեհու սուրբ երկիրները թուրք տիրապետութենէն, Արևմտեայց հետ բուլորովին միացան։ Խաչակիրներու դարէն սկսիալ կիլիկիա պատկանեցաւ Լուսինեանց մէկ ճիշդի մը, որ կիլիկիոյ

Լուսնեանց կը կոչուին, մինչև 1375, երբ լւսն Զ. թագաւորը ձերբակալուեցաւ եղիտացիներէն, որ միացած էին թուրք-մէններուն հետ, և իր թագաւորութիւնը բաժնուեցաւ այս երկու ժողովորդներուն մէջ: Հայերը շատ բազմաթիւ են, մանաւանդ Աստանայի, Մ'երսինի, Կոցանի և Կէպէւ-Պէրէրէթի կուսակալութեանց մէջ, և ասոնց բոլոր վաճառականութիւնը իրենց ձեռքն է: Կը բնակին թուրքիէրն աւելի հարուստ և հանգիստ տուներու մէջ. վայելու էր հագուին, և ընդհանրապէս դրամական լաւ պայմաններու մէջ կը գտնուին: Ասկից է ահա թուրքիէրն ատելութիւնը, որ կը Քրամայեն երկրին և գրաւած են ամէն պաշտօնատարութիւնները՝ մասնաւրապէս շահաւորները, ատելութիւն որ, եթէ խաղաղութեան միջոց կը ծածկուի ու կը սցօղուի բարեկամութեամբ, ուրիշ բանի համար չէ բայց եթէ լաւ ևս մնանելու և զօրանալու, որպէս զի յետոյ որոշեալ ժամուն ամէն տեղ մոլեխորէն պոռթկայ: Այս պարագաներուն՝ յաճախ կիները մարդկէն աւելի կատաղի և արիւնարորու են: Հայերն ուրեմն և ընդհանրապէս քրիստոնեաները ենթարկուած են թուրք մոլեխանդութեան ահաւոր արհաւրդներուն, որ չկարծուած ժամանակին ալ կրնայ պայմիլ:

Ո՞վ չէ լսած 1995ին...: Բայց հոս ոչ տեղը և ոչ ժամանակն է այն դէպքերով վրայ խօսելու բայց կը բաւէ միայն յիշելը որ այն ցաւատանջ առթիւն, իսաւլիս ինքնինքն արժանի ցուցուց իր անուան և բաղացականութիւն տարածող աւանդութեան, արգիլելով անդրագոյն ջարդերը և օգնելով կոտորածներուն աղիտարեր հետեանքները նուազեցնելու:

\*  
\*\*

Ատանայ բաղացը զործունէութեան կեզրոնն է Վիլայէթին՝ որուն բաղացական, կառավարչական և վաճառականական մայրաքաղաքն է: Հին ամենաբիշ բաղացները

բնէ մին է որ պահուած ըլլայ և ամէն լեզուներով ալ նոյն անուամբ կոչուի: Գիղեցիկ և շնորհալի քաղաք մը՝ զոր կը կտրէ Այինունը, տարօրինակ ոգմորութեան մը, մեծ շարժման և շահապանափ կեղրոնը կ'ըլլայ, մասնաւորապէս օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր: ամիսներուն, ժամանակ՝ աշխատաւորներու, երլրագործական բերքեր վաճառողներու և զնողներու ողողման: Ճամրաները այն ատեն իռուտած են, ու սայլերով, կառքերով և տեղափոխական ուրիշ հազարումէկ միջոցներով խափանուած. մարդ կը խւանայ ջորի, լիմոնաթիւ, սափի, պատուի, բաղցրաւենեաց և զգեստեղէններու շրջուն վաճառողներէն, նման մեր տօնավաճառներուն, այս տարրերութեամբ սակայն որ հակառակ բազմութեան խառնիճաղաննին, ապահով են իրենց դրամին վրայ և հարկ չկայ ժողովուրոց զգուշացնել քանակաւոներէն: Այփտակ ցեղը այնքան աւելի յարգուած է, որը բնըը լաւ կը վարուի ու կը յարգէ: Վատանգ չկայ որ ամենաչշխն թշնամանց մըն ալ կրենց, մանաւանդ թէ թէ բեռնակինները և թէ էն գիւղացի տմարդիներն ալ, հոն՝ բաղացալարութիւն և յարգանց ցոյց կուտան:

Ատանայի մէջ մեծդի բարացէն կամուրջ մը կը միացնէ գետին երկու ափերը: Աւանդութիւնը շինուած կը կարծէ Ա. Հեղինէ կայսրուհին, բայց պատմութիւնը Սելուկիանց գործ մը կը համարի զայն, որոնք, ուրիշ թուրք տիրապետողներու հետ, անուամի եղան հանգիստ ճամրաներու և շքեղ կամուրջներու շինութիւններով, զորս կը տեսնենց նաև Ատալիոյ կողմերն ալ:

Ճամրաներու զբութիւնը, որ մեծ տեղ կը բնէ երկրի մը զարգացման մէջ, լաւ է, բայց անոնց պահպանութիւնը ամենա-

1. Կամակած արգոյ գրաքմութիւնը պատշաճ համարեցաւ յապահել թու թեղիմակին մէկ պարբերութիւնը, որում պարունակութիւնը դեւրաւ կրթաթ գուշակել մեր ըմթերցողը.

գէշ: Վիլայէթին զլիսաւոր կեղրոններուն Ամենագեղեցիկներէն մին, լեռնային յարաբերութեան համար, զեռ այսօր պա- վայրերուն պատճառաւն ալ զորս կը կը- հուած, բոլոր կառքի ճամբաներուն իմաս- տրէ, ան է որ կ'առաջնորդէ Տարսոնէն տուն մտածողն ու շինել տուողն է Ապ- Քիւլէք-Պողազ և ասկէ ալ Ոգգէօրրու կան



Առաջնա

պետին Փաշան, որ կուսակալ էր 1880էն 1884: իրմէ վերջ այլ ևս ոչ ոք մտածեց ճամբաները նորոգել, թող թէ մեծցնել ու բարւոցել:

աւելի քան 800 հզմ. կառքի ճամբաներ, ոչինչ քան մը եթէ կ'ուզէք, բայց ճամ- բաներու զարգացումը հաւասար քայլով պիտի ընթանայ երկրագործական և վա-

ճառականական զարգացման հետ՝ իմաստուն և գործոն կառավարութեան մը տակ:

\*  
\* \*

Փորձեցի, Տեերք, մերձաւոր գաղափարը մը տալ ձեզ հին կիլիկիոյ կամ Աստանայի Վիլայէթին վրայ, բաղաբներէն գիւղերը, և լոներէն դաշտերը իշխենվ:

Հանդիփեցնը զանազան ցեղերու որ հոն կ'ապրին ու կը սպասեն որ մէկը ձեռք տայ իրենց զարգացումի և բաղաբականութեան ճամբուն մէջ զրուելու: Խընեց բարը և ունեցած թիչ ուժերնին թող չեն տար իրենց՝ ինքնազուս շարժում մ'ընելու եթէ իմաստուն ձեռք մը ոտքի չընէ և չուղղէ զանոնք: Հարստութիններ կան որ երես թողուած կը մնան, ծածկուած և կոխուուած զանձեր, մենց ինչու համար չժողվենց այս հարստութինները, զուրս չհանենց այս զանձերը, և այնչափ թացուն ուժերէն չօգտուինք: Խալացից զաւադիս մէջ ընդհանուր համակրութին մը կը վայլեն, աւելի մեծ համակրութին մը բան միւս ազգերը, որ այնու հանդերձ կը ջանան ամէն միջոցներով իրենց խլել զայն, զրամի մեծամեծ գումարներ կը ծախսեն, անդադար կ'աշխատին և աշխատանքով երկրին կը բարեկործեն: Ժողովուրդը մեզի հետ է բոլորովին, նաև տաճիկը, բայց գեռ աւելի քրիստոնեայն, և այս ոչ միայն Աստանայի այլ բոլոր Վիլայէթին մէջ: Ֆրանսացի կրօնաւորները, Աստանայի, Տարսոնի և Մերսինի մէջ մանչերու և աղջիներու դպրոցներ ունին, շուրջ 1300 աշակերտներով: Աստանայի մէջ ունին նաև փոքրիկ որբանոց մը տարրական հիւանդանոցով:

Ամերիկացի բոլորականները ունին եկեղեցիներ, Հակայ կրթական պալատներ, ու յիշած բոլոր բաղաբներուն մէջ զպրոցներ 1100 աշակերտներով, և ամէն տարի շատ զրամ կը ծախսեն տարածելու համամերիկանութիւնը (panamericanismo): Գերմանացից հոն դպրոցներ ունին և

ուզած են ուրիշ գործեր ալ հիմնել. սուսագի մեծ ազդեցութիւն կ'ընէ, Աստանայի հին կայարանէն ելլելով, մեծ պալատի մը վրայ խոշոր տառերով գրութեան մ'ընթերցումը, որ կ'ըսէ. Deutsche Schule (գերմանական դպրոց):

Մենց այժմ դպրոց մ'ալ չունինք ո՛չ մէկ բաղացի մէջ: Ճարտարարուեստից և վաճառականական գործիչներուն բարձրագոյն դպրոցը, խալացի ճարտարապետէն մը հիմուած ու վերջերս կայսերական իրատէով մը վաւերացուած, այլ ևս գոյութիւն չունի: Ուտելեաց և պատասի տեսակներու ևն... վաճառականութեամբ թիչ մը կ'աշխատուի: Բամպակի մեծ քանակութիւն մը զուրս կը տարսի, բայց այս ամէնը շատ թիչ է, որովհետեւ իրապէս կարելի է շատ աւելի մեծցնել գործունէութիւնը:

Ու կը վերջացնեմ յիշելով մեծ նշանակութիւն ունեցող դէպր մը: Երբ խոալական հիւպատուարանին բացումն եղաւ, և, Ալբունի Հիւպատոսը, յուզուած, բարձր պատշգամին վրայ տնկեց մեր զրօշը: Սավոյիոյ խաչով որ իր բարեգուշակ գոյներով կը շողովոյէր կիլիկիոյ արևուն վառվուն ճառագայթներուն մէջ, աղաղակ մը փրթաւ, անակնկալ աղաղակ մը շորջը խոնուած ամրութիւն մէջ, կեցցէի աղաղակ մը մեր հայրենիքին, կեցցէ խոալիա:

Dr. Giuseppe Capra  
(Bollettino della Reale Società Geografica  
N. 7 1915)

Թէֆ. ԵՎ. Գ. Ա.

